Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Վարդանանց հ4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա (3 դասաժամ), երաժշտություն (2 դասաժամ), կերպարվեստ (2 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավոր¬ման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),

- մեկ լուսանկար 3x4 չա¬փի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատան¬քային գրքույկի պատճենը (առկայության դեպ¬քում),

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատաս¬խանատու անձը փաստաթղթերի բնօրինակնե¬րը համեմատում է պատճենների հետ և բնօ¬րինակները վերադարձնում: Եթե ներկայաց¬ված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կա¬րող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամ¬կետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ս/թ դեկտեմբերի 27–ից մինչև 2024թ. հունվարի 12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հունվարի 17-ին՝ ժամը 15:00-ին, Սպիտակի Վարդանանց հ4 հիմնական դպրոցում: Հասցեն՝ ք.Սպիտակ, Այգեստան 53:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0255) 2-24-88 կամ /096/112979 հեռախոսահամարներով: